Համաձայն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 17.10.2023թ. որոշման
Գործում է 17.11.2023 թվականից

AMIO-ՄՓՄՁ Աջակցում

Գերմանահայկական Հիմնադրամի «ՄՓՄՁ Աջակցում» վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր

1	Պայմաններ	Վարկ	
		Փոքր բիզնեսի վարկ	Միջին բիզնեսի վարկ
1.1	Արժույթ	ՀՀ դրամ	
1.2	Տարեկան անվանական տոկոսադրույք[1]	13.5%	12.5%
1.3	Պարտավորություն/ գրավ հարաբերակցություն	▪ Ավանդային և բանկային հաշվիվներում առկա դրամական միջոցների մինչև 100%-ի չափով, ընդ որում՝ նույն արժույթի դրամական միջոցների՝ մինչև 100%-ի չափով, տարբեր արժույթների դեպքում՝ մինչև 90%-ի չափով, ▪ Անշարժ գույքի դեպքում՝ մինչև 70%-ի չափով, ընդ որում՝ 50,000,001 ՀՀ դրամ և ավել վարկերի դեպքում տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կազմում պետք է կազմի նվազագույնը 50%, ▪ Ծարժական գույքի դեպքում՝ մինչև 50%-ի չափով, ▪ Ապրանքանյութական պաշարների դեպքում՝ մինչև 30%, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կազմում չի կարող գերազանցել 30%, ▪ Դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավելի, քան բանկային հաշիվներով իրականացվող վերջին 12 ամիսների միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության 50 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան 150,000,000 ՀՀ դրամ: Տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 20%: Միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառությունը հաշվարկվում է վերջին 12 ամսվա կտրվածքով, իսկ 12 ամսից պակաս Բանկի հաճախորդ լինելու պարագայում՝ վերջին 6 ամսվա կտրվածքով, ընդ որում վերջին 3 ամսվա զուտ կրեդիտային շրջանառությունը չպետք է պակաս լինի նախորդող 3 ամսվա զուտ կրեդիտային շրջանառությունից:	
1.4	Ֆինանսավորման նպատակ	Բիզնեսի ընթացիկ կարիքների (շրջանառու միջոցներ) և բիզնեսում ներդրումների (մեքենաներ, սարքավորումներ, ձեռնարկությունների շինություններ և այլն) ֆինանսավորման նպատակով:	
1.5	Ժամկետ	12-60 ամիս, ընդ որում՝ 1-5 մլն ՀՀ դրամ վարկերի՝ երկու անձի երաշխավորությամբ տրամադրման դեպքում՝ առավելագույնը 36 ամիս	12-60 ամիս
1.6	Մարման եղանակ	Տոկոսները՝ ամենամսյա, մայր գումարի մարումները՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից	

[1] Այն դեպքում, երբ Ծրագրի շրջանակներում Վարկը չի վերաֆինանսավորվում կամ դադարեցվում է վերաֆինանսավորումը, Վարկը համարվում է Բանկի սեփական ռեսուրսներով տրամադրված վարկ՝ տվյալ պահին Բանկի բիզնես վարկերի համար սահմանված պայմաններով (տոկոսադրույք, ժամկետ և այլն):

1.7	Գումար	1,000,000-50,000,000 ՀՀ դրամ	50,000,001-260,000,000 ՀՀ դրամ Մեկ վարկառուին կարող է տրամադրվել առավելագույնը 260,000,000 ՀՀ դրամ, ընդ որում՝ 100,000,000 ՀՀ դրամ՝ շրջանառու միջոցների համալրման նպատակով, 160,000,000 ՀՀ դրամ՝ ներդրումային կամ խառը նպատակներով:
1.8	Վաղաժամկետ մարման տույժ, տուգանք	Չի կիրառվում	
1.9	Գործողության տարածք	ՀՀ	
2	**Բանկի միջնորդավճար**		
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար	0 ՀՀդրամ	
2.2	Սպասարկման միանվագ միջնորդավճար	0 ՀՀդրամ	Պայմանագրի գումարի 0.5%
2.3	Վարկային միջոցների կանխիկացման միջնորդավճար	Համաձայն հաշվից միջոցների կանխիկացման Բանկում գործող սակագների	
3	**Ապահովվածություն**		
3.1	Ապահովվածություն	Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ, անշարժ և շարժական գույք, հիմնական միջոցներ, դրամական հոսքեր (դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք), շրջանառոու միջոցներ, իրավունքի գրավ, խառը գրավ և Բանկի կողմից ընդունելի այլ գրավ: Երաշխիքները, երաշխավորությունները, արժեթղթերի գրավը, բաժնետոմսի գրավը, բաժնեմասի գրավը, փայի գրավը հանդիսանում են լրացուցիչ ապահովվածության միջոցներ: 1,000,000-5,000,000 ՀՀ դրամ վարկերը տրամադրվում են 2 անձի երաշխավորությամբ, ընդ որում՝ անհատ ձեռնարկատերերի դեպքում երաշխավորներից մեկը պետք է հանդիսանա վերջինիս ընտանիքի անդամ (բացակայության դեպքում այլ ազգակցական կապ ունեցող անձ) և իրական շահառուն (առկայության դեպքում), իսկ մյուսը՝ ընտանիքի անդամ կամ նույն բիզնեսի աշխատակից չհանդիսացող երրորդ անձ: Իրավաբանական անձանց դեպքում՝ տնօրենը, մասնակիցները (10% և ավելի փայամասնություն ունեցող մասնակիցներ), բիզնեսի իրական շահառուն և ընտանիքի անդամ կամ նույն բիզնեսի աշխատակից չհանդիսացող երրորդ անձ:	
3.2	Լրացուցիչ պայման	Բնակելի նշանակության անշարժ գույքի գրավադրման ժամանակ Գրավատուն ներկայացնում է սեփականության իրավունքի ծագման հիմքերը, և եթե դրանք Գրավատուին են փոխանցվել նվիրատվության գործարքի հիման վրա և սեփականությունը փոխանցվել է Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացնելուն նախորդող երեք տարվա ընթացքում, ապապահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ նվիրատուի համապարտ կամ սուբսիդիար երաշխավորություն՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն ենթակետը կիրառելի չէ, եթե Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացման պահին նվիրատուն մահացած է:	
3.3	Պարտադիր պայման	✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ մասնակցի (մասնակիցների) 100% բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի պարտադիր գրավադրում: ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ 10% և ավել բաժնետոմս, բաժնեմաս, փայ ունեցող մասնակցի (մասնակիցների) կողմից համապարտ երաշխավորության պարտադիր տրամադրում:	
4	**Գրավի գնահատում և ապահովագրություն**		
4.1	Գրավի արժեքի գնահատում	Անշարժ և շարժական գույքերի, հիմնական միջոցների, շրջանառոու միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից: Արժեթղթերի, Բանկի կողմից ընդունելի այլ գույքերի և իրավունքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության:	

4.2	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության
5	**Վարկառուի նկատմամբ պահանջներ**	
5.1	Վարկառու	ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր
5.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	• Առնվազն 12 ամսվա գործունեության փորձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ՝ ոչ ավել, քան 30 օր, ընդ որում վերջին երեք ամիսների ընթացքում ուշացումների քանակը չպետք է գերազանցի յուրաքանչյուր ամսվա համար 6 օրը. • Վերջին 12 ամիսների ընթացքում դասակարգված պարտավորությունների բացակայություն:
5.3	Պարտադիր պայման	Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքում ստացվող ֆինանսական ցուցանիշները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:
6	**Երաշխավորի նկատմամբ պահանջներ**	
6.1	Երաշխավոր	ՀՀ-ում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
6.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	• Առնվազն 12 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր կամ 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների (ներառյալ տրամադրված երաշխավորությունների) գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ՝ ոչ ավել, քան 30 օր, ընդ որում վերջին երեք ամիսների ընթացքում ուշացումների քանակը չպետք է գերազանցի յուրաքանչյուր ամսվա համար 6 օրը. • Վերջին 12 ամիսների ընթացքում դասակարգված պարտավորությունների բացակայություն:
7	**Լրացուցիչ պայմաններ**	
7.1	**Մինչ 31.10.2023թ. ներառյալ տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝** • Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով, • Դրամական պարտավորությունը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, **01.11.2023 թվականից տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝** Բանկն իրավունք ունի՝ • Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: • Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց գումարի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար:	